ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ «ՀԱՎԱՏՔ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Մայիսի 1-2-ը Հայաստանի և Արցախի ողջ տարածքում շուրջ 17 հազար պատանիներ մասնակցեցին Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված «Հավատք և ժառանգություն» շարժմանը: Այդ օրերին շարժման մասնակիցները՝ 14-18 տարեկան պատանիներ ու աղջիկներ, ավելի քան 80 վանքերի և արգելոցների տարածքներում իրականացրեցին բարեզարդման աշխատանքներ:

Գեղեցիկ միջոցառման առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքի ու քաջալերանքի ուղերձը հղեց բոլոր մասնակիցներին: Ուղերձում մասնավորապես ասվում է.

ԱՊՐԷՔ, ԵՐԵԽԷՔ

Սրտի գերագույն աստիճանի ուրախությամբ տեղեկացայ 1700-ամեակի Յանձնախումբի Վարիչ-Տնօրէն Գերշ. Տ. Մեսրոպ Արքեպս. Աշճեանէն, որ այս երկու օրերը, 1-2 Մայիս, դուք ձեր կեանքին մէջ արժեցնում էք մեր Մայր Հայրենիքի փառակերտ հին եկեղեցիներին ուխտի գնալով, աղօթք անելով և քրտինք թափելով նրանց մաքրազարդման համար:

Ապրէ՛ք, երեխէք:

Հիանալի մի գաղափար, որին ահա շօշափելի և պերճախօս արտայայտութիւն էք տալիս շքեղ և օրինակելի հաւատարմութեամբ հանդէպ ձեր հայրերի սուրբ ժառանգութեան:

Երջանիկ եմ, որ ճիշտ էք ըմբռնում եկեղեցու իմաստը: Եկեղեցին սոսկ քարը չէ, նիւթը չէ, այլ՝ ձեր ապրումն է, ձեր մասնակցութիւնն է եկեղեցու կեանքին: Բայց քարը ունի իրեն յատուկ իմաստ, քանի նրա միջից են արտայայտւում կրօնական զգացումը, արուեստի տաղանդը:

Ապրէ՛ք, երեխէք:

Հայաստանի կերպարանափոխութիւնը մի տեսակ պայծառակերպութիւն պիտի լինի նո՛ր սերնդով: Ժամանակին մարդիկ եղան, որ քանդեցին, աւերեցին, կեղտոտեցին, արհամարհեցին: Ահա դուք կը վերաշինէք, կը մաքրազարդէք, կը պայծառացնէք:

Ապրէ՛ք, երեխէք:

Այս երկու օրերը ձեզ համար մի տեսակ դպրոցական դասընթացք է, որի միջից հոգին է, որ խօսում է ձեզի, խօսում է ձեզի հետ, խօսում է ձեր միջոցաւ մեր ժողովրդի հետ: 1700-ամեակի պանծացման լաւագոյն և ամենէն պատուաբեր եղանակներից մէկն է այդ:

Որովհետև՝

«Եկեղեցին հայկական՝
ծննդավայրն է հոգւոյս»:

Եւ ո՞ր անձի համար ծննդավայրը քաղցրագոյն վայրը չէ:

Լծուե՛նք աշխատանքի, որպէսզի այդ ծննդավայրը դառնայ մեր բոլորիս համար կենսավայր՝ աղբիւր երջանկութեան և յաղթանակի:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին
1-2 Մայիս 1999